ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 342

15 սեպտեմբերի 2023 թվականի N - Ա

«ՆՈՌՆԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով Քրիստինե Ստեփանյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 15-ից լուծել «Նռնաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Գրիգորյանի հետ 2022 թվականի մայիսի 3-ին կնքված N 19 աշխատանքային պայմանագիրը:

2. 2023 թվականի սեպտեմբերի 15-ից «Նռնաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Քրիստինե Ստեփանյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 15
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290